

թումբն երկու կողմանէ ալ անխոտիր, և  
ձրինս կամ ձլինո խողին մէջ ամենին անհարուած ելի կը մնայ: վասն զի սոտիին հարուած կը ուելու ատեն քաջ ձիափարն քաջ ձիոյն արագապէս կը պատուարի ՚ի ներզոյ նորա: Դեռ զիս ՚ի կոռու լծելու փորձն գեղացւոց մէջ մտած չէ. և ձին ինչպէս ուրիշ ամեն կենդանիք՝ ձմեռը միսյն փակուած կը կենան ախոռին մէջ, ամառը ազատ կոյտու նախրին հետ առաւօտէ մինչև ցերեկոյ յարօտ կ'երթան, ՚ի բաց առեալ որձ պահծու ձիերն որոնք միշտ ներսը մնալուն պատճառաւ ախոռի ձի կը կոչուին: Զիերն ալ հիւանդութիւններու ունին, որոնց բժիշկն իւրաքանչիւր գեղացւոց բնական լցոն ու փորձն է:

Ուուսիոյ Շիրակ գաւառն գոմէջ պահելու շատ յարմար չէ. սակայն կարեոր հարկ մը կը ստիպէ շատերն ոչ միսյն լծելու համար գոմէջ ունենալ, այլ և մատակ պահելու, որ էդ գոմէջին սեփականուած է ռամկին մէջ: Դարձեալ եղանց ուժոյն կորդ երկիր պատռելու

անբաւականութիւնն կարեոր ըրած է գոմէջը: Ինչ որ եղնադարմանութեան նկատմամբ ըսինք, նոյնը կ'ըսենք և գոմչոց համար ալ, այսու միայն զանազանութեամբ՝ որ եղն ջրով մաքրութեան շատ կարօտութիւն չունի, իսկ գոմէջն գոնէ ձմեռն ամիսը միտնդամ՝ պէտք է լուանալ սապոն ջրով, միշտ սանտրել ու խալաւել <sup>1</sup> և կտաւատի ձիթով օծել, որպէս զի կենդանի չգոյանայ: իսկ ամառն թէպէտինքնին ջրասէր ու տըղմասէր է, սակայն գոնէ երկու ամիս միանգամմանորէն մաքրուելու պէտք ունի: Մատակին կաթն, կարագն ու սերն շատ յարգի են. անհաւատալի թերես չգիտողակ և չտեսից, սակայն մատակի կաթն, սերը ու եղն թեթեն է ու քմապարար քան զկովուն ու զոյշարին: Գոմչոյ միսն սեղակ բայց ախորժահամ է. կաշին թանկագին ու եղջիւըն կարեոր ՚ի գործածութիւն տեղացւոց :

1 ՏՀ. Գուալ. գործի երկամի՝ կենդանիներ քերելու համար, որը հայք Խաչառ կոչէն, անկ ելած է բոյն Խաչառէւ:

Կը շարունակոյի:

## Ա Յ Ֆ Ֆ Ա Ա Յ Ֆ Ի Ն Ի

### Գ

Իմ աչաց լցոս, իմ նազելի,  
Իմ գեղեցիկ լցոս սիրելի,  
Լիցուք ընդ քեն ՚ի մի հոգի. Պրօ՛, պրօ՛,  
Դիցուք ՚ի բաց զառիթ չարի:

Սիրով սրտի յօժարեսցուք,  
Ցերկոտութեանց հեռի լիցուք,  
Հոգովով մարմնով ուրախասցուք,  
Եւ անցուսցուք զօրս ՚ի բարի:

Ո՞ւր են նախնիքն մեր որ անցին.  
Չեն ՚ի միջի ոչ երմին,  
Գնացին ՚ի բաց և զմեղ նային.  
Օր մի և մեղ երթալ պիտի:

Հիւսեալ աւուրբ կենաց մերոց  
Զետ հովանի անցանելոց,  
Հստ սաղմոսին սրբոց երգոց,  
Լուծեալ գընիմիք ՚ի տապանի:

Քանդի չափով են մեր աւուրբ  
Եթէ գընուարը և եթէ դիւրը.  
Եթէ սակաւը և եթէ բիւրը,  
Համայն եղրի և դադարի:

Իսկ յապայդ որ գալոց է  
Զեմբ խելամուտ թէ ընդ որոց է.  
Վասն այնորիկ հոգալոց է  
՚ի ՚ի բարին գայ կատարի:

Արդ ձեզ ասեմ ինձ լրսեցէք,  
Ղզիրտը ձեր սիրով լըցէք.

Արտախութեամբ միշտ խընդացէք  
Զի Տէրն առձեզ գայ ըընակի:

Արտով ըզձեզ միշտ աղաչչեմ,  
Սէր ըզհոգւցն ես ձեզ պատմեմ:  
Արտով զլստուած 'ի մեզ զիտեմ  
Արպէս 'ի գիրս ամեն ճատի:

Ամ քաղցրիկ կենաց հաղորդ  
Լինիս առողջ հանապազորդ  
Եւ յիշեսցես զիս մեռեալ որդ:

Դ

Այն առաջին ժամանակին  
Որ զատղաբերըն տընկեցին,  
Յառաջ զխաղողն գովեցին  
Ու մեղաց գեղ անուանեցին:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Պատեցին բոլորեցին  
Միրդդ պայծառ զարդարեցին,  
Ամեն բարով զայդիդ լըցին  
Ապա զայգոյ գովեն ասացին:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական.

Է՛ քո պատերը թըթենի  
Եուրդ ու բոլորդ ամբաւենի,  
Եւ քո ծառերդ խընկինի  
Պըտուղ բերէ քաղցըը բարի:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական.

Է՛ քո մեղուն թել և շիտակ  
Խրկայնացեալ զինչ բարունակ;  
Խաղողն վերան թուփ և սպիտակ  
Ուռեր հանել հաստ ու բարակ:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական.

Յորժամ աշունքըն մօտենայր  
Այդեպանքն ելնեն ու գան,  
Այց ձեռին սուր և դանակ  
Զախոյ ձեռին քթոց քաղելցակ:

Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Զեհզ քաղին և ամեն հընձան  
Ըստաւչէն լընուն աման.  
Հզեքեղ ծեծեն թողուն ու երթան  
Լինիս բաժակ անապական:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Սարկաւագունք զայս լըսեցին  
Սազմուելով ընդ առաջ գնացին,  
Տարեալ բեմին բազմեցուցին  
Եւ քաւիչ դեղ անուանեցին:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Այ ալիի վեր մեծարեցին  
Սուրը սեղանին բազմեցուցին,  
Ի ձեռըն սուրը քահանային  
Եւ հաշտարար պատարագին:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Այ գու պըտուղ քաղցը և բարի  
Գոյնըդ կարմիր և ծիրանի,  
Պատարագիս եկեղեցի,  
Յանցանք մարդկան քերով ջընջին,  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Թագաւորաց յառաջ երթաս  
Ոչ երկընչիս և ոչ վախենաս,  
Հատ պարունայր ըսպաննել տաս  
Հատոց խալաթ առնուս և գաս:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Հատ խելօններ խելաց ձըգես,  
Եւ շատ անխելք 'ի խելք բերես.  
Եւ շատ հաշտած կը կըլվացնես  
Եւ շատ կըրված հաշտեցընես:  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական:

Է քո անուն Տիրատուր  
Եւ իմ անուն Աստուածատուր .  
Կրթէն 'ի լի արա և տուր  
Դու շատ ապրիս ով թասատուր :  
Այ լից ու տուր, այ լից ու տուր,  
Դու լից 'ի տուր զանուշ գինին,  
Որ է բաժակ անապական :

Ե

Հոգի, մի ասեր զարիպ,  
Թէ չէ իմ սիրոս կ'արունի .  
Ղարիպն 'ի յօտար երկիր,  
Գէմ, ամ խիստ դիժար կու լինի :

Զինչ հաւն երամէն մողորած,  
Ի՞ն տեղ չի հանգչի,  
Այնչափ երերուն կենայ  
Մինչ որ իւր երամըն հասանէ :

Ղարիպ, սիրոտ մի նեղեր,  
Այս դիժար օրերս անցանի .  
Հատ զարիպ 'ի տուն դարձաւ,  
Մի վախեր թէ քեզ չի լինի :

ԶԱՍտուած ողորմած կ'ասեն,  
Ողորմի ամին զարիպ .  
Քեզ այլ օգնական լինի,  
Որ հասնիս սըրտիդ մուրատի :

Հոգի, գէմ, դու լաւ կ'ասես,  
Աիրոս է սե քան զգործելի .  
Ի զարիպութեան տէրտէն  
Երեսիս գունը կը քաղուի :

Յորժամ ես 'ի միտ ածեմ,  
Զիմ եղարքն և զիմ սիրելիք .  
Հոգիս բերանիս կ'առնու,  
Քակելոյ ճարակ մի շրւնի :

Ղարիպ, զուսայ մի աներ,  
Ղուսայէն մարդըն չի շահիր .  
Հատ մանուկ զուսայ կ'անէ,  
Ի շահին տեղն է ինք զենէր :

Ղուսան շատոնց ցաւ կու տայ,  
Ի ցաւէն մարդըն մեռանի .  
Զինչ սիրտն որ հասրաթ ունի,  
Ամենէն մահրում կը լինի :

Աւաղ զզարիպն ասեմ,  
Որ յօտար երկիր հանդիպի .  
Աչերն արտասուզ ՚ի լի,  
Ի յերեսն 'ի վայր կու թափի :

Յորժամ 'ի մէճլիս նըստի,  
Ցանկարծ սըրտիկն արիւնի .  
Զաչերն 'ի բոլոր ածէ,  
Կարենոր ոչ ոք նա չըւնի :

Ամինքս եմք զարիպք, եղարք,  
Հայրէնի մարդ իսկի չունիմք .  
Հաւասար գնալու եմք մեք,  
Ջի այն կեանքն է մեզ հայրէնի :

Աստէնըս քեզ ճար արա,  
Որ անտէն հոգիդ չի տանջի .  
Չսուրբքն 'ի քեզ եղարք չինէ,  
Ու զհրեշտակք արա սիրելի :

Զ

Հանդարտ կերպարան քաղցրութեան սիրոյ  
Ի դիմաց իմոց պարգև գըրուատոյ .  
Նըփրել պարտիմ քաղցր աղբիւր լըրոյ,  
Պանծալի տատրակ, կից հոգւոյ իմոյ :

Ի ծովէ մեծէ ակն մարգարտոյ,  
Ազնիւ պարտիվէ ծաղիկ գալարոյ .  
Ծնտրեալ 'ի վշոց վարդ հոտոսներոյ,  
Արուսեակ պայծառ 'ի վերջ գիշերոյ :

Ի բարձր սեռից գու իսկ սերեցար,  
Ազնիւ գիւցագին որ անուանեցար .  
Մաշցեալ սիրուս պարիսպ կառուցար,  
Ասկ անարգ ծընողաց վիրաւորեցար :

Աւաղ կենցադոյս յորմէ հեռացար,  
Հոգի 'ի մարմնոյս իւ բաժանեցար .  
• Արպէն աղանի դու յոյժ բարձրացար  
Էջ 'ի ներ սիրտն իմ՝ յորմէ սարտուցար :

Ասանեալ սիրտն իմ սէրդ առ իս կոչէ  
Սաստկացոյն վիրացն բուժիլ հրաւիրէ,  
Ջի առանց սիրոյդ մահու արժան է  
Փութա խընայել զի յոյժ վայել է :